


ԽԱՉԻԿ ՄԱՆԱՍԵԼՅԱՆ

*Երկրային պիես*

2006 թ.

*Անաի Միրով՝ նվիրում եմ ծնողներին*



**ԵՐԿՐԱՅԻՆ ՊԻԵՍ**

Գրքում զետեղված են խոհափիլիսոփայական  
բանաստեղծություններ  
Հեղինակի առաջին ժողովածուն է

2006 թիվ

Դեկորացիաներ կյանքի բեմի համար

\*\*\*

Սկիզբը չենք հիշում,  
Իսկ վերջը հիշելը,  
Գուցե անիմաստ է,  
Բայց, որ բազում անգամ  
Մենք հատել ենք ներկա  
Հոճ աշխարհի շեմը՝  
Ակնհայտ է,  
Փաստ է...

\*\*\*

Գուցե պատրաստ է սուկ  
Եվ ուղեղի մորմոք,  
Այն, ինչն անվանում ենք  
Ժամանակի հոսք:  
Ուր է հոսում արդյոք.  
Հոսում է ինչն արդյոք.  
Հոսում է, որ...  
Օ՛, այդ մենք ենք հոսում  
Ալիք-ալիք, անվերջ՝  
Փորձառության հունով  
Արտասովոր:

\*\*\*

Այնպես կլանված ու  
Համոզված ենք խաղում  
Դերերը մեր այս ծուռ,  
Հարափոփոխ կյանքում...  
Մոռանում ենք իսպառ,  
Որ վարագույրն, ավաղ,  
Բեմադրիչի կամքով  
Շատ հաճախ է փակվում:

\*\*\*

Մենք ինքներս ենք փոխում  
Խաղի սցենարը,  
Ավա՛ղ, խառնիխուռը  
Ու մեկ-մեկուց անկախ:  
Ու՞ր կտանի մեզ այս  
Խառնաշփոթ խաղը,  
Եվ ի՞նչ հանգրվանի՝  
Մեզ անհայտ է հաճախ...

\*\*\*

Փակում ենք մտքով  
Ներհոսքը լույսի,  
Խաղում՝ բեմի մութ  
Ստվերների հետ:  
Խաղում ենք առանց  
Հավատի, Հույսի՝  
Բարու ու Սիրո  
Բերկրանքին անգետ...

\*\*\*

Եթե դեր ենք խաղում,  
Գոնե խաղանք մաքուր,  
Մանկան թեթև սրտով,  
Մինչև բեմը փակվի:  
Ի՞նչ կարիք կա կրծել  
Խաղընկերոջ հոգին  
Ինտրիգներով ճղճիմ,  
Վեճ ու կռվով անսեր  
Ու անհարկի...

\*\*\*

Թատրոնն այս ունի  
Եվ հուշարարներ,  
Որ օգնում են մեզ  
Լոկ այն պահերին,  
Երբ պատրաստ ենք Լույս  
Եվ Հույս արարել՝  
Ոչ սոսկ մեզ համար,  
Այլ նաև մյուս  
Խաղընկերների:

\*\*\*

Ո՞վ կարող է հիշել՝  
Քանի՞ կյանքեր անցան,  
Քանի՞ անցորդ.  
Խաղընկե՛ր իմ, արի  
Հարափոփոխ բեմում  
Լոկ մեր Սերը թողնենք  
Անմնացորդ...

\*\*\*

Գուցե հեռավոր  
Մի զբոսայգում  
Կերտված է նախկին  
Կերպարանքը քո:  
Գուցե ծաղիկ ես  
Եղել մեղմաբույր,  
Եվ հանգչել մեկի  
Արձանի ներքո...

\*\*\*

Ինքնամոռաց խաղում  
Կորսվում է հաճախ  
Սերը անանձնական...  
Այնինչ Սերն է միայն  
Քո փրկության հույսը,  
Կյանքի բեմի ճամփո՛րդ  
Հավերժական:

\*\*\*

Մենք այնքան Միրո  
Երգ ենք անթեղում  
Մեր հոգիներում,  
Որ Միրո հնոց  
Սրտի պատյանը  
Էլ չի դիմանում  
Ահեղ ճնշմանը,  
Եվ մահվան քողով  
Պրծնում է բանը...

\*\*\*

Մեր արտաքին խաղում  
Եվ խոսքերն են իզուր,  
Եվ աղոթքն է անզոր,  
Քանի դեռ մեր ներսում  
Մենք չենք փորձում բացել  
Սրտի իմացության  
Նոր հորիզոն...



\*\*\*

Թատրոնի մեջ՝ թատրոն,  
Բանտերի մեջ՝ բանտեր,  
Մեզ իրարից զատող  
Փշալարեր, պատեր.  
Թանձր ամպն է սիրող  
Մեր սրտերը պատել,  
Եվ կարող ենք իրար  
Բզկտել ու ասել...

\*\*\*

Քանի բեմը կա՝  
Ապրում ենք խաղով:  
Երբ բեմը փակվի,  
Բարձրյալի կամքով՝  
Մենք կապրենք էլի  
Եվ կսավառնենք  
Նոր ոլորտներով  
Անիմանալի...

\*\*\*

Երանի նրանց,  
Ովքեր կամ գետնին,  
Կամ երկնքում են.  
Իսկ ես ոտքերով  
Կանգնած եմ հողին,  
Միրտս՝  
Թռչուն է...

\*\*\*

Թռչունը չգիտե,  
Որ ինքը թռչուն է:  
Եթե իմանար,  
Գուցե այլ լիներ  
Նրա թռիչքը:  
Եվ ճախրանքի մեջ  
Հայեցողական,  
Գուցե նա գտներ  
Ճշմարտությունը  
Միակ իրական:

\*\*\*

Հարկ է կառչել մանկությունից,  
Որ պարզ մնանք,  
Որ չհոգնենք ճանապարհի  
Հազար ու մի զիգզագներից,  
Ու վիատված  
Չմեղանչենք խղճին ընդդեմ:  
Հարկ է պահել մանկան հոգին  
Որպես նիզակ՝  
Ուղղված մոլար ու ինքնասեր  
Մեր «ես»-ի դեմ:

\*\*\*

Պատահական չէ  
Ոչ մեկի կյանքը,  
Իմաստալից է  
Ու խորհրդավոր  
Պահի ընթացքը:  
Չկա մի շարժում,  
Չկա մի արարք,  
Որ անցնի իզուր  
Ու աննպատակ:

\*\*\*

Ամեն մի պահը  
Ծնունդ է, բերկրանք,  
Նաև վախճան է  
Եվ ճիշ հուսահատ:  
Ամեն մի պահը խաչաձևում է  
Հազար ու մի կյանք:  
Անորսալի է, անհիմանալի,  
Եվ ունի բազում  
Գաղտնիքներ իր մեջ  
Ամեն մի պահը...

\*\*\*

Թվում է մարդը՝  
Որպես չնչին կետ  
Տարածության մեջ  
Եվ ժամանակի  
Կարճատև մի պահ:  
Իսկ իրականում՝  
Հենց այդ կետի մեջ,  
Յուրաքանչյուր պահ  
Ծավալվում է մի  
Հսկա տիեզերք,  
Որ սահման չունի,  
Եվ չունի վախճան...

\*\*\*

Թվում է կինը  
Հեռվից օվկիանոս,  
Եվ սուզակները  
Խորասուզվում են՝  
Հատակում գանձեր  
Գտնելու հույսով:  
Բայց կնոջ գանձը  
Եթերային է,  
Անմար աստղի պես  
Շողշողում է միշտ,  
Եվ կոչվում է՝ Սեր...

\*\*\*

-Պատրաստ, դուրբ արաջին:  
Չորս բոլոր լռություն է:  
Արտիստը պետք է արտասովի.

Այդպես է պահանջում դերը:  
Զգում է արտիստն ընկերների  
Հույսով ու հավատով լի  
Հայացքները:  
Բայց այս ուր են, չկան  
Արցունքները.  
Դեռ երեկ առատ էին,  
Երբ տանը փորձեց դերը:  
Չէ, նա ճիշտ է հասկացել,  
Եվ մեկնաբանել է ճիշտ  
Իր հերոսին:  
Այդ կարծիքին է նաև  
Ռեժիսորը,  
Նրա հետ համաձայն են  
Բոլորը  
Միասին:  
Իսկ արցունքներ չկան,

Կորել են,  
Չեն ուզում գան:  
-Ընդմիջում,-ասում է  
Ռեժիսորը,  
Դուրս են գնում բոլորը,  
Մնում է արտիստը  
Մենակ:  
Կարծես՝ ցավում է սիրտը,  
Զգացում է ինչ-որ  
Տարօրինակ:  
Իր հերոսի վիշտը  
Դեմ է առել կոկորդին,  
Ու ինքն իրեն արդեն  
Չի ճանաչում արտիստը...  
Հանկարծ

Հոսում են արցունքները՝  
Առատորեն ու անկաշկանդ,  
Եվ արտիստը հասկանու է,  
Որ անկասկած  
Պետք է թողնի դերն այդ,  
Որովհետև  
Այդ հերոսի դերում  
Կորցնում է իր դեմքը.  
Որովհետև  
Այդ հերոսի դերում  
Կորցնում է իրեն...

\*\*\*

Հանգի՛ստ, եղբայրս, հանգի՛ստ,  
Դու հող-մարմին չես միայն.  
Խաղաղություն տուր մտքիդ,  
Մի համարի՛ր կյանքն ունայն:  
Թե հայելուդ մեջ հանկարծ  
Տեսնես լույսի անդրադարձ,  
Ուրեմն՝ դեռ վերջը չէ,  
Ուրեմն՝ կա վերադարձ:  
Թե չտեսնես, իմացի՛ր,  
Միննույնն է, վերջ չկա.  
Թե չտեսնես, հույսդ դիր  
Կյանքի վրա ապագա:  
Գուցե հաջորդ քո կյանքում  
Դու կլինես լավատես,  
Ու քո անցած ողջ ճամփան  
Հայելուդ մեջ կտեսնես:

\*\*\*

Բարձրում հրեղեն հոգիներն անդուլ  
Բանականության ուղին են հարթում  
Տիեզերական,  
Քառսի խավար ուժերն են սանձում,  
Ու դարձնում անցավ  
Մարդկանց ապագան:  
Իսկ մենք կուրորեն,  
Ականջներս խուլ,  
Նյութի հմայքով անդարձ կլանված,  
Խաղալիքներով լոկ հրապուրված՝  
Չենք ուզում զգալ մեզ անչափելի  
Տիեզերքի մեջ,  
Եվ տիեզերքը  
Անսահման ու մեծ՝  
Չենք զգում մեր մեջ...

\*\*\*

Մենք մեր ապագան  
Հող ենք համարում,  
Կամ տարակուսում.  
«Կա՞ հանդերձյալ կյանք»,  
Բայց, հենց անցնում ենք  
Շեմն անցողիկի,  
Մեր դեմ հառնում է  
Կյանքը իրական,  
Ուր չկա չարի,  
Բարու երկրնտրանք,  
Ոչ սպառնալիք,  
Ոչ հարկադրանք:  
Տեղ չկա ողբի, վախի, բողոքի,  
Եվ չկա անգոր  
Մենության պատրանք,  
Այլ ամենագոր Արարչի գրկում  
Վայելում ենք մենք  
Եվ Մեր, և Բերկրանք:

\*\*\*

Եթե շատ են դիզվում  
Առօրյա մեր հոգսերը,  
Սրտում էլ չի կիզվում  
Անանձնական Մերը:  
Չենք վստահում, հարկավ,  
Աստծո Հույսին, Լույսին,  
Ստիպված ենք հոգալ  
Վաղվա օրվա մասին:  
Մեզ հոգսերն են կրծում,  
Ի՞նչ կարող ենք անել,  
Հազար հարց ենք լուծում՝  
Ճարահատյալ, անել:  
Բայց, մարդ աստծո, մի պահ  
Սանձիր կառքը մտքիդ.  
Գուցե՝ գտնես ճամփա  
Եվ ազատվե՞ս հոգսից:  
Ունկնդրե՞ս դու, գուցե,  
Քո իսկ սրտի ձայնին,



Դեկորացիաներ՝ դերասանների  
համար

Փորձանք չէ դա, փորձ է,  
Այնուամենայնիվ:  
Գուցե պարզվի, որ դու  
Քեզ իզուր ես տանջում,  
Գուցե՝ Հայրը որդուց  
Այլ բան չի պահանջում,  
Բացի պարզ մի սրտից  
Եվ մի Սիրուց անմար,  
Հավատից մի, Հույսից,  
Որ պահվում է միշտ վառ:

\*\*\*

Դու, որ խաղում ես բանաստեղծի դեր,  
Մի՛ շտապիր թղթին հանձնել ամեն բան.  
Մտքեր կան, որ քո սրտից են բխել,  
Կան՝ որ օտար են ու թափառական:  
Այն, ինչ քոնը չէ, պետք չէ, մի երգիր,  
Թող մնան օդում՝ անստորագիր...

\*\*\*

Դու, որ խաղում ես թատերագրի դեր,  
Արդյոք ո՞ր կյանքն ես պատկերել  
ուզում.

Այն, որ խաղում եք հերոսդ էլ, դու է՞լ,  
Թե՞ մի այլ կյանքի հարց է քեզ հուզում:  
Եթե սույն հարցը քեզ էլ չտանջի,  
Գուցե՝ հոնորարդ բազմակի աճի...

\*\*\*

Դու, որ խաղում ես դերասանի դեր,  
Հյուսում ես շուրջդ կրկնակի շղարշ:  
Ոչ ինքզինք գիտես, ոչ հերոսդ ես դեռ,  
Ինչքան էլ խաղաս կլանված ու վարժ:  
Իսկ ելքը մեկն է՝ նախ քե՛զ ճանաչիր,  
Նոր հետո մի այլ աշխարհ թափանցիր:

\*\*\*

Դու, որ թատրոնում դիտում ես խաղեր  
Ու ծափահարում՝ ջերմորեն, հուզված,  
Արդյոք, հրատապ հարցեր չե՞ս թողել  
Քո իսկ հոգևոր կյանքում չլուծված:  
Գուցե, պետք է հենց քե՞զ ծափահարել,  
Որ այդպես խորն ես դերիդ մեջ  
սուզված:

\*\*\*

Դու, որ խաղում ես երգահանի դեր,  
Անգոր է քո դեմ մտքերիդ խաղը.  
Եթե մեղեդիդ գերում է սրտեր,  
Հավերժ կլսեն քո երգն ու տաղը:  
Բայց եթե կեղծես քո սրտի ձայնը,  
Համարիր՝ գործդ սին է, ունայն է...

\*\*\*

Դուք, որ կերտում եք պատկեր ու  
արձան,  
Գործում է ձեր մեջ Արարչի մասը.  
Քանի՛ -քանիսը Նրան մոռացան,  
Եվ ստիպված են սերտել նոր դասը:  
Կավարտվի երթն այդ ուսուցողական  
Հաջող քննության՝մբ լոկ ավարտական:

\*\*\*

Դու, որ խաղում ես այգեպանի դեր,  
Քո ապրուստը չես միայն դու հոգում.  
Նշանակված ես դու ողջ Երկրին տեր,  
Հողագունդը այս քեզնով է ծաղկուն:  
Դե՛ն նետիր գիտուն այրերի թույնը,  
Անարա՛տ պահիր քո այգու բույրը:

\*\*\*

Դու, որ խաղում ես գիտնականի դեր,  
Քո ուշքն ու միտքը տվել ես նյութին.  
Անկենդանի մեջ խարիսխ ես նետել՝  
Հետևում ես սոսկ նրա բնույթին:  
Ամենուր կյանք է, վկա՛ է Աստված.  
Քո մե՛ջ իսկ ունես հազար առեղծված...

\*\*\*

Դու, որ խաղում ես գործարարի դեր՝  
Հոգիդ ու սիրտդ թողնելով անտեր,  
Ամենից շատ ինձ քո վերջն է հուզում,  
Քանզի պարզ բան է, թե ինչ ես ուզում:  
Աղոթում եմ ես քո հոգու համար՝  
Ինչքան էլ փողին ծառայես համառ...

\*\*\*

Դու, որ խաղում ես ղեկավարի դեր,  
Բայց գիտես միայն աթոռակռիվ,  
Տե՛ս, թե ինչպես է այգեպանը ծեր  
Հավաքում այգում փշեր ու խռիվ:  
Եվ, թե հետո ինչ պետք է սպասել,  
Կարծում եմ՝ ես չեմ, որ պետք է ասեմ:

\*\*\*

Դու, որ մարմինդ ես վաճառում, ավա՛ղ,  
Տաճարը քո այդդարձրել ես շուկա.  
Ամեն ստոր մարդ, սրիկա, ճիվաղ  
Մուտք ունի այնտեղ՝ թե ձեռքին փող  
կա:  
Փակի՛ր տաճարդ, փակի՛ր, սիրելիս,  
Սարսում եմ այս խոսքը գրելիս...  
Փողոցում նստած՝ փող մուրաս, լավ է,  
Հագուրդ տալ չարին՝ էլ քեզնից բավ է:

\*\*\*

Ոմանք հայտնվում են  
Մուրացկանի դերում,  
Կան՝ որ փող են դիզում  
Նրանց հաշվին:  
Նա, ով փող է մուրում՝  
Մեր պարտքերն է մարում,  
Թալանչին էլ՝ թող իր  
Խղճից քաշվի...

\*\*\*

Է՛յ, դու, որ «Աստծո սպասավոր» ես,  
Քո խավար խցի կյանքին սովոր ես,  
Վառ գույներ հագիր, վայելիր լույսը.  
Գուցե՛ դա է հենց քո վերջին հույսը...  
Աստվածավախը՝ աստվածափախ է,  
Գլխին վեղար, թե՛ հովվի փափախ է:  
Սատանան չէ՛ հենց քեզ դրդում սգալ,  
Երբ սպասվում է Նոր Արևագալ:

\*\*\*

Դու, որ կրթում ես մատաղ սերնդին  
(Կրթել ենք քեզ էլ՝ հենց այնպես, թեթև),  
Կրթելով միտքը՝ մի կրտիր հոգին,  
Որ քո սաները քեզ հետո չատեն:  
Շարունակվու՛մ է գործն այս  
հաջորդիվ  
Կրտված հոգիներ մենք ունենք  
անթիվ...

\*\*\*

Դու, որ խաղում ես դատավորի դեր,  
Պետք է պաշտպանես դատը արդարի.  
Բայց, հասկանում ենք, կան փողեր,  
զանգեր,  
Այդպես է հիմա կարգը աշխարհի:  
Ավա՛ղ, չեն գործում զանգեր ու փողեր,  
Երբ քո երկրային մարմինն ես թողել,  
Եվ անդրաշխարհի դատավճիռը  
Ի հայտ է բերում ծանր ոճիրդ...



\*\*\*

Դու, որ խաղում ես լրագրողի դեր,  
Եթերում լինի, թե թերթի էջում,  
Մի՛ դատիր երբեք, որ քեզ չդատեն,  
Բայց ճշմարտությամբ՝ եղի՛ր անզիջում:  
Իսկ եթե ծախված՝ սուտ ես տարածում,  
Համարիր՝ դաշտում խոտ ես արածում.  
Ուր քշեն՝ գնաս:  
Ուր թողնեն՝ մնաս:

\*\*\*

Դու, որ խաղում ես ոստիկանի դեր՝  
Կարգազանցերին խարազանելով,  
Սովոր ես թույլին բերման ենթարկել՝  
Փողատերերից զանազանելով:  
Քո անմիտ վարքով նրան ես հասել  
(Այդ մասին, կարծեմ, դու էլ ես լսել),  
Որ թեկուզ տուժեն,  
Վերքն իրե՛նք բուժեն,  
Մարդիկ խորշում են սուկ երկու բանից՝  
Գոփող բժշկից, մեկ էլ օրգանից:

\*\*\*

Դու, որ մարմնական ախտեր ես  
բուժում

Անգիր սերտելով մարմնի մասերը,  
Չե՞ս մարում, արդյոք, քո խոսքի ուժով  
«Անհույս հիվանդիդ» աղոտ հույսերը:

Ամեն ոք ներսում իր բժիշկն ունի.

Այդ հարցում է, որ մե՞ծ է քո դերը,  
Բայց, հետևելով գրքիդ ցուցումին՝  
Գործի ես դնում դանակն ու դեղը...

\*\*\*

Դու, որ մի հպարտ պատգամավոր ես,  
Եվ վաստակել ես բավարար ձայներ,  
Ոնես և «տանիք», նաև քավոր ես,  
Անձեռնամուխ ես և նման բաներ,  
Խաղի կանոն ես անվերջ մշակում  
(Հեռու՝ կգնաս քո այդ փեշակում),  
Մի՛ դատիր, սակայն, տանիքից վերև,  
Երբ Օրենք չունես, ոչ Սեր, ոչ Արև:

\*\*\*

Դու, որ մի ձախորդ քաղաքագետ ես,  
Եվ գերի՝ շինծու գաղափարներին,  
Մի հարցում է, որ լավ մասնագետ ես՝  
Մոտ լինել վերին կերակրամանին:  
Երբ շատ են նեղում, Աստուց ես  
կառչում,  
Բայց հենց խայծ լինի՝ հեռու ես  
փախչում:  
Ոչ ոք չգիտե՝ ի՞նչ է ուզածդ:  
Կարգին գործ չկա՞, վաստակես հացդ...

\*\*\*

Դուք, որ երգում եք օտար դայլայլով,  
Եվ գովաբանում մեկդ մյուսին,  
Հիանում եք ձեր «աստղային» փայլով,  
Եվ հարցազրույց վարում միասին,  
Ցավոք, այնպես եք երգ աղավաղում,  
Որ լսողների արյունն է պաղում:  
Կմարի, անշուշտ, ձեր աստղը վաղը՝  
Կհնչի տաղը  
Մեծ Կոմիտասի:

\*\*\*

Դու, որ մի հմուտ առևտրական ես,  
Է՛հ, շարունակիր առօրյա գործը:  
Ոչ կողմնակալ ես, ոչ խտրական ես.  
Գուցե՝ պետք կգա քո կյանքի փորձը:  
Ոչ պարտք տուր, ոչ՝ ան: Պահիր  
                                    հաշիվդ:  
Որ հաշվել գիտես՝ դա էլ հաշիվ է...

\*\*\*

Մկանդ ես մարգում ճոպանի պես պիրկ,  
Որ դառնաս անհաղթ մարզիկ անվանի:  
Ունես հաղթության անկասելի ձիրք,  
Ունկն էլ ես խաճում քո ախոյանի:  
Ավա՛ղ, այնքան ես դու բռիանում,  
Որ քեզ, ստիպված, զնդան են տանում:

\*\*\*

Դու, որ բանում ես դրսում հնազանդ,  
Եվ մտնում տունդ՝ արդար հանգստի,  
Թույլ մի՛ տուր անմիտ սերիալ ու  
գովազդ

Քո խաղաղ տունը մատնեն կորստի:  
Տոն մի՛ տուր դատարկ  
բարբառանքներին,

Բռնության, սեքսի գաղջ քարոզներին:

Հարևանիդ հետ մի՛ վիճաբանիր,  
Ոչ մեկին իզուր մի՛ վատաբանիր,  
Բողոք մի՛ հայտնիր և ոչ մի հարցում,  
Մի՛ մեղադրիր ոչ մեկին գործում:  
Քո հարկի տակ միշտ երգը թող հնչի,  
Ու միշտ թևածի Սերը Արարչի:

Անաղարտ պահիր ընտանիքը քո  
Բարեգութ Աստծո հայացքի ներքո:  
Գաղտնիքի կարգով ասեմ՝ իմացիր,  
Որոգայթներին բազում դիմացի՛ր.  
Օգնում է Տերը փրկել մի ազգի՝  
Հանուն միայն մի արդար զավակի:  
Ուր որ անգոր են բանակ, նախագահ,  
Փրկիչը երկրի այդ մեկն է՝ որ կա  
(Պետք չէ շատերը նրան ճանաչեն.  
Եթե ճանաչեն, գուցեն՝ խաչեն...):

## Վարագույրի փոխարեն

\*\*\*

Եթե ձեր աչքերն այլևս  
Անգոր կլինեն ինձ տեսնել,  
Եվ ձեր ականջներն արդեն  
Խուլ կլինեն իմ ձայնին,  
Իմ անկենդան մարմնի շուրջ  
Փոխանակ սգալու  
Նրան շուտափույթ  
Կրակին հանձնեցեք:  
Հարագատնե՛րս,  
Դուք մեղք գործած չեք լինի, ոչ,  
Ավելին տաքացե՛ք  
Կրակի ջերմությամբ,

Միայն թե՛ մի սգացեք  
Չեղած կորստի համար,  
Միայն թե՛  
Անունն իմ մի՛ շղթայեք  
Անցյալի ձեր հուշերով:  
Եվ հավատացեք  
Անխուսափելի է  
Ոչ թե մահն, այլ կյանքը:  
Եվ հավատացեք՝  
Կյանքն անսահման է  
Տիեզերքի պես:  
Ինձ փնտրեցեք այնտեղ...  
Ինձ փնտրեցեք այնտեղ...  
Մենք դեռ կհանդիպենք...  
Մենք դեռ կհանդիպենք...

\*\*\*

Ընթերցո՛ղ, եթե տողերիս խորքում  
Գտար քեզ ուղղված իմ խոսքը կծու,  
Գիտցիր, որ ես էլ «սուրբ» չեմ այս  
կյանքում,

Այլ՝ մի մեղավոր, խեղճ մահկանացու:  
Իսկ երբ կփակվի բեմը մեզ համար,  
Եվ կհայտնվենք մի այլ ոլորտում,  
Գիտեմ, ջերմորեն կգրկենք իրար՝  
Չարից ազատված,  
Մերը՝ մեր սրտում...